ՄԱՆՎԵԼ ՈՓՅԱՆ
MANVEL VOPYAN

ԱՎՍՏՐՈ-ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ 19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

19-րդ դարի վերջին քառորդում Կենտրոնական տերությունները (Ավստրո-Հունգարիան և Գերմանիան) հայերի նկատմամբ վարում էին հակահայ քաղաքականություն, ինչը ցանկալի էր սուլթանական կառավարության համար: Այդ մասին է վկայում այն իրողությունը, որ Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Կալիկեն Օսմանյան Թուրքիայում ավստրոհունգարական դիվանագիտական կորպուսի ավագը, իր գերմանացի գործընկերոջ հետ մեկտեղ վայելում էր սուլթան Աբդուլ Համիդի վստահությունը:[1] Նրանց քաղաքականությունը վառ դրսևորվում էր 1894 թվականի հայկական կոտորածների ժամանակ, երբ հայերի հետապնդումները հասնում են իրենց բարձրակետին: Այդ ընթացքում քրդական հրոսակախմբերը ներխուժում են Սասունի շրջան, որոնց սակայն հայերը ետ են շպրտում: Այնուհետև Բիթլիսի նահանգապետը Սուլթանի հետ հեռագրագրույցից հետո կառավարական զորքեր է ուղարկում, որոնք քրդական հրոսակախմբերի հետ հարձակվում են հայկական գյուղերի վրա: 1894թ. օգոստոսի 18-ից մինչև սեպտեմբերի 10-ը նրանք ավիրում և կողոպտում էին հայկական բնակավայրերը, սպանում և բանտերն էին նետում «ապստամբ հայերին»: Մինչդեռ Կալիկեն նոյեմբերի 29-ին խոստովանում է, որ հայերի հանդեպ՝ որպես ազգի, շատ քիչ համակրանք ունի, և որ իրեն երբեք կոչված չի համարել դառնալու նրանց փաստաբանը տարածքային ինքնիշխանություն ձեռք բերելու հարցում: Նա շարունակում է, որ զուտ մարդկային տեսանկյունից ոճրագործությունները սարսափելի է համարում. «Հազիվ թե հնարավոր է, որ քաղաքակրթված Եվրոպան կարողանա հանդուրժել նմանօրինակ հանցագործություններ իր սահմանների մոտ»:[2] Նա հավելում է. «Սուլթանը փորձից իմանալով, որ Եվրոպան ոչ մի անգամ ուժ չի կիրառի իր նկատմամբ,

[1] Österreich-Armenien 1872-1936. Faksimilesammlung diplomatische Aktenstucke, (Herausgegeben und eingeleited von Mag. Dr. Artem Ohandjanian), Band I, 1872-1894, Wien, 1995, S.522.
[2] Նույն տեղում, էջ 690.

տերություններին լռեցնում է բարեփոխումների մասին խոստումներով»:[3] Կարծելով թե բարեփոխումների մասին հավաստիացումները լուրջ են՝ 1895թ. սեպտեմբերի 24-ին մեծ տերությունների դեսպաններին հղած ուղերձում հայոց պատրիարք Մատթեոսն առաջարկում է բարեփոխումների նախագծերի իրականացումը հայկական գավառներում դնել եվրոպացիների հսկողության տակ՝ հույս ունենալով, որ միայն եվրոպական երկրների բարի կամքը կարող է վերջ դնել այդ սարսափելի իրադարձություններին:[4] Այս օրերին տեղի էին ունենում հայ ժողովրդի մասսայական կոտորածներ, թալանվում և հրդեհվում էին նրանց տները: Կալիկեն Վիեննա ուղարկած մի զեկույցում գրում էր, որ եվրոպական թերթերում ներկայացվող հայերի ջարդերի նկարագրությունները սաստիկ նվազեցված են, քան իրականում տեղի են ունենում:[5]

Հայկական ջարդերի կապակցությամբ մեծ տերությունների դեսպանները փորձում էին բողոքել Բարձր Դռանը: Այս առիթով Կալիկեն գրում է. «Դուռը պետք է վերջապես հասկանա, որ որքան էլ տարամետ լինեն քաղաքական շահերը, մարդկության և քրիստոնեության պաշտպանության հարցերում դաշինքի տերությունները նույն կարծիքին են»:[6] 1895–1896թթ. Արևմտյան Հայաստանում հայերի սոսկալի ջարդերը ցնցում էին անգամ գերմանական իմպերիալիզմի ջատագովներին: Նրանցից Պ. Ռորբախն այդ մասին գրել է. «Այն, ինչ իրոք տեղի ունեցավ Հայաստանում, իր մանրամասնություններով այնքան սարսափելի է, այնքան ցնցիչ, որ ոչ մի գրիչ, ոչ մի երևակայություն չի կարող պարզ պատկերացում տալ անվերջ, ահավոր այն տառապանքների մասին, որ պատճառեցին այդ ժողովրդին և նա կրեց»:[7] Դեսպանների գործողությունները մոլորեցնում էին սուլթանին. մի կողմից նրան գանգատախեղդ էին անում հայերի հանդեպ կատարած ոճրագործությունների պատճառով, մյուս կողմից մասնավոր ընդունելությունների ժամանակ հավաստիացնում էին, որ հայերի առիթով կարիք չկա վախենալու ճնշող միջոցառումներից: Փաստորեն եվրոպական տերությունները հայկական հարցն օգտագործում էին սուլթանին իրենց կողմը գրավելու համար: Օժանդակությունը, որը Թուրքիան ստանում էր հատկապես Գերմանիայից, նպաստեց այն բանին, որ նա շարունակի

---

[3] Контаисон де Людовик, Реформы в Азиатской Турции. Армянский вопрос. М., 1914, с. 33.

[4] Օհանջանյան Ա., 1915 թվական. անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Երևան,1997, էջ 25:

[5] Österreich -Armenien 1872-1936, Bd. 2, S. 121.

[6] Նույն տեղում, էջ 126.

[7] Ղարիբջանյան Գ., Գերմանիան, Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը, Երևան, 2001, էջ 15-16:

հայերի հանդեպ տարվող իր քաղաքականությունը. «Սուլթանը Գերմանիայի պաշտպանական վահանի տակ, որին նա այնքան պարտական է, զգում է իրեն ավելի ազատ և հաստատ քան երբևէ», - գրում է Կալիկեն Վիեննա:[8]

Իսկ Անգլիայի դեսպան Կարիերը Կալիկեի հետ ունեցած մի զրույցի ժամանակ դժգոհում է սուլթանի վարած հակահայ քաղաքականությունից և սպառնում, որ Անգլիան ստիպված կլինի Թուրքիայի դեմ առանձին գործողությունների դիմելու: «Անգլիայի առանձին գործողությունները սակայն կարող է համաշխարհային հրդեհի սկիզբ դառնալ»,- հավաստիացնում էր նրան Կալիկեն:[9] Ռուսաստանը և Ֆրանսիան նույնպես Թուրքիայում Կենտրոնական տերությունների գերիշխող դիրքի առթիվ մտահոգված էին: Ընդ որում Անգլիան առաջարկում էր տապալել Աբդուլ Համիդին և Թուրքիային նորովի կարգի բերել: Ծրագիրը սակայն ցավալիորեն տապալվում է Դանուբյան միապետության (Ավստրո-Հունգարիայի) դիվանագիտության մտնառով. «Ավստրիական դեսպանն այն միակն է,- գրել է Թուրքիայի արտաքին գործերի նախարարը Մեծ վեզիր Հալիլ փաշային,- որը հայտարարել է, որ Օսմանյան կայսրության ամբողջականությունը հույժ անհրաժեշտ է Եվրոպայի խաղաղությունը պահպանելու համար»:[10]

Շուտով Գերմանիան նույնպես բողոք է ներկայացնում Բարձր Դռանը մյուս եվրոպական տերությունների հետ միասին: Արդեն 1895թ. հոկտեմբերի 4-ին Գերմանիայի դեսպան Զաուրման Պոլսից գրել է. «Թուրքական իշխանություններն անձամբ են պատասխանատվություն կրում Ստամբուլի մահմեդական բնակչության կողմից իրականացված արյունոտ խժդժությունների համար, քանի որ տեղյակ լինելով նախատեսված ցույցի մասին՝ փոխանակ այն հասարակ ձևով զորքերի միջոցով խանգարելու, նրանք թույլատրեցին զենքով ու հատկապես հաստ մահակներով ծածուկ զինված ամբոխին հարձակվելու երթի վրա»:[11] Հայերի հալածանքները պարբերական բնույթ էին կրում: Երբ ոճրագործությունները գագաթնակետին էին հասնում, օտար երկրների հյուպատոսները բողոք էին հղում Սուլթանին, իսկ երբ իրավիճակը հանդարտվում էր, ոճրագործությունները նորից էին ակտիվանում, որի պատճառը հյուպատոսների մրցակցությունն էր սուլթանին դուր գալու ու շողոքորթելու հարցում: Հայերի կոտորածներում Գերմանիայի մեղքը նկատի առնելով՝ Անգլիայի արտաքին

---

[8] Österreich -Armenien 1872-1936. Bd. 4. S. 2710.
[9] Նույն տեղում, էջ 1465.
[10] Ohandjanian A., Die armenische Frage und die Rolle Österreich-Ungarns und Deutchlands. Erevan, 2001, S. 21.
[11] Նույն տեղում, էջ 22.

գործերի մինիստրության պետքարտուղար Վիսկոնտ Գրեյը ծանր կշտամբանքներ է առաջ քաշել. «Գերմանիան ընդլայնում է իր տնտեսական շահերը Թուրքիայում: Փոքր Ասիայի հարստություններն անցնում են նրա ձեռքը, նա ստանում է այս առավելությունը առաջնորդվելով այն համոզմունքով, որ քաղաքականության մեջ բարոյականությունը արժեք չունի»:[12]

Կենտրոնական տերությունների հակահայ քաղաքականությունը վառ դրսևորվում էր նրանց քաղաքական գործիչների խոսքերում: Գերմանիայի արտաքին գործերի պետական քարտուղար Մարշալը գրում էր. «Ոչ Գերմանիան, ոչ էլ Ավստրիան, առավել ևս Իտալիան, իրենց խիղճը ծանրացած չպիտի զգան հայկական գործերի պատճառով»:[13] Իսկ պետական քարտուղար ֆոն Շոենը Գերմանիայի հայկական քաղաքականության մասին ճշմարտացիորեն շեշտում էր. «Մենք միշտ դժկամությամբ ենք պաշտպանել հայկական բարեփոխումների վերաբերյալ տերությունների գաղափարները»:[14] Այդ են վկայում եվրոպական դիվանագետների դատողությունները հայկական հարցի և տերությունների վերաբերմունքի առնչությամբ. «Ավստրիան և Ռուսաստանը, որոնք վախենում էին իրարից և երկուսն էլ մտածում էին իրենց հեղինակության ու ազդեցության մասին, գործին (քրիստոնեական փոքրամասնությունների կոտորածներ) ազատ ընթացք էին տվել... Եթե Ավստրիան ու Ռուսաստանը չէին ղեկավարվում մարդկայնության նկատառումներով, ապա Գերմանիան բացահայտորեն չարաշահում էր դրանք և բարեկամացավ Աբդուլ Համիդի հետ Փոքր Ասիայում իր նյութական շահերը պաշտպանելու համար»:[15]

Շարունակվող հայերի հալածանքների վերաբերյալ 1900թ. սեպտեմբերի 26-ի ավստրո-հունգարական մի զեկուցագրում գրված է. «Հայերն անվերջորեն հետապնդվում են: Պատժում և բանտարկում են կասկածելի հայերին: 1896 թ. խռովություններից հետո այն մինչև այժմ չի դադարել: Ամենօրյա թերթերում այսպիսի լուրեր են տպագրվում, որոնք սակայն ոչ մի արձագանք չեն գտնում»:[16] Այն, որ հարյուր հազարավոր հայեր էին սպանվում, ոչ մի նշանակություն չուներ, քանզի բարոյականությունը քաղաքականության մեջ հաշվի չի առնվում: Թեև համաիսլամականությունը քրիստոնեությանը հաղթելու մի միջոց էր, բայց Կենտրոնական տերությունները խորհուրդ էին տվել Աբդուլ Համիդին, պրոպագանդել համաիսլամականություն և ազգայնամոլու-

---

[12] Ohandjanian A., Die armenische Frage und die Rolle, S. 23.
[13] Նույն տեղում, էջ 25:
[14] Օհանջանյան Ա., 1915 թվական. անհերքելի վկայություններ, էջ 25:
[15] Österreich -Armenien 1872-1936, Bd.4, S. 2689.
[16] Նույն տեղում, էջ 2717.

թյուն: Դա Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հակաքրիստոնյա քաղաքականությունն էր, որոնք իրենց ընտրյալ էին համարում Թուրքիայում քրիստոնյաների հովանավորը լինելու հարցում: Երեսպաշտորեն հոգոց հանելով հայկական ջարդերի և անմեղ զոհերի համար՝ «Վիլհելմ II-ը, կանցլեր Հոհենլոեն և արտաքին գործերի պետական քարտուղար Մարշալն իրենց գործողություններով փաստորեն խրախուսում էին ջարդարարներին»:[17] Վիլհելմ II-ն էր, որ 1898թ. նոյեմբերի 8-ին Դամասկոսում հայտարարում է. «Նորին Վեհափառության Սուլթանը, ինչպես նաև 300 մլն. մահմեդականները, որոնք կփառավորեն իրենց խալիֆը, կընդունեն վստահ ըլլալ, թե գերմանիայի կայսրն իրենց բարեկամն է ընդմիշտ»:[18]

1894-1896թթ. կոտորածների ժամանակ Գերմանիայի կայսր Վիլհելմ II-ն իր դիմանկարն է ուղարկում սուլթանին և մի նամակ, որտեղ խորհուրդ էր տալիս «իր հպատակներին ցույց տալ, որ ինքը միանձն է Աստծո ողորմածությամբ և իր կամքը նրանց համար աստծո կամք է»:[19]

Այդ իրադարձություններից հետո, երբ Ռուսաստանը և եվրոպական տերությունները նոտայով դիմեցին Բարձր Դռանը Հայաստանում բարեփոխումներ իրագործելու կապակցությամբ, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան ցուցաբերեցին իրենց համապատասխան վերաբերմունքը:[20]

Դեսպանների պատկառազդու ճնշման ներքո, և Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի «բարեկամական» խորհուրդների հիման վրա 1895 թ. հոկտեմբերի 17-ին Սուլթանն ստիպված էր ընդունել բարեփոխումների մասին տերությունների առաջարկությունները և հայերի համար ներման ու բարենորոգումների նախագիծ մշակելու հրաման արձակել:[21] Վեց դեսպաններն իրենց կողմից մշակեցին բարենորոգումների մի ծրագիր և այն ներկայացրեցին սուլթանին: Սակայն այն իրականացնել չհաջողվեց. Կրետեի հարցը և հույն-թուրքական պատերազմը վերացրին դրան մասնակից կառավարությունների շահագրգռվածությունը բարենորոգումների նախագծի վերաբերյալ: Ավստրո-Հունգարիայի դեսպան Կալիկեն հետևյալ մեկնաբանությունն է տալիս բարենորոգումների առնչությամբ. «Այն կոնֆերանսները, որոնք տեղի էին ունենում Կ.Պոլսում, կյանքի էին կոչվել արյունալի իրադարձությունների և բուն Կ.Պոլ-

---

[17] Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, (գիրք առաջին), Երևան, 1982, էջ 91:
[18] Հակոբյան Հ., Թուրքիան գերման ճանկերուն մեջ, Թիֆլիս, 1918, էջ 46-47:
[19] Амфитеатров А. В., Армянский вопрос, СПб., 1906, с. 43.
[20] Լևոն Զորմիսյան, Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության, Երևան, 1975, էջ 258:
[21] Օհանջանյան Ս., 1915 թվական. անհերքելի վկայություններ, էջ 26:

սում սպառնալից անկարգությունների հետևանքով: Իսկ հայկական խնդիրների շուրջ, ըստ էության, եվրոպական տերությունները երբեք համատեղ հանդես չեն եկել»:[22] Այս անգամ նույնպես հայերին տրված հույսը շատ արագ խափանվում է, և բարենորոգումները համարյա ոչ մի արդյունք չեն ունենում, բացի այն, որ հայերին ստիպում էին մահմեդականություն ընդունել: Միայն 1918թ. բարեփոխումների վերաբերյալ հայկական պատվիրակության կողմից Հաշտության կոնֆերանսին ներկայացրած հուշագրում ասվում է. «Սան-Ստեֆանոյի (1877թ.) և Բեռլինի (1878թ.) դաշնագրերը, Կիպրոսի պայմանագիրը, 1895թ. դեսպանների կողմից Դռանը ներկայացված բարենորոգումների ծրագիրը միջազգային ակտեր են թուրքական ռեժիմի ապօրինությունները վերացնելու համար: Սակայն դրանք ամենքն էլ անբավարար են, քանի որ եվրոպական դիվանագետները միշտ էլ բավականացել են կիսամիջոցներով: Ամեն անգամ երբ Եվրոպան խոսել է ռեֆորմների մասին, Թուրքիան պատասխանել է կոտորածներով և Եվրոպան լռել է»:[23] Ավստրոհունգարական դիվանագիտությունը նույնպես «հայկական հարցի լուծումն ամբողջապես թողնում էր սուլթան Աբդուլ Համիդի հայեցողությանը»:[24] Թեև Աբդուլ Համիդը համաձայնել էր Ռուսաստանի և Ավստրիայի կողմից կազմած բարեփոխումների համատեղ ծրագրին, այնուամենայնիվ այն չէր կարող իրագործվել անկարողության, անտնտեսվարության և կաշառակերության պատճառով, ինչն օրեցօր վատթարացնում էր Թուրքիայի ներքին վիճակը:

Ամենամոտ ապագայում սպասվում էր Թուրքիայի բաժանումը մեծ տերությունների շահերի ոլորտների: Մինչդեռ Թուրքիայի պահպանումը Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի կարևորագույն նպատակներից էր, որովհետև ուժեղ Թուրքիան ճնշում էր Ռուսաստանի կողմից հրահրված բալկանյան երկրներին և դրանով թեթևանում էր Ավստրիայի այս կողմից վտանգի տակ գտնվող թևը: Բացի դրանից Գերմանիայի համար հետզհետե ավելի կարևոր էր դառնում Թուրքիայի տնտեսական շահագործումը, և որպեսզի հնարավոր լիներ կասեցնել Թուրքիայի բաժանումը, վերջինս պետք է լիբերալացվեր: Դրա համար էր երիտթուրքերի շարժումը:

Ինչպես նշում է պատմաբան Ս. Ստեփանյանը, Գերմանիայի դիրքորոշումը հայկական խնդրում շատ հստակ էր արտահայտված. «Նա բացարձակ

---

[22] Osterreich -Armenien 1872-1936, Bd. 4, S. 2732.

[23] Հայկական հարցը Հաշտության կոնֆերանսի առաջ: «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», Երևան, 2002, N 5, էջ 155:

[24] Կիրակոսյան Ա., Ավստրո-Հունգարիայի քաղաքականությունը հայկական հարցում (1895-1897), ԼՀԳ, Երևան, 1984, թիվ 1, էջ 30:

դեմ էր հանդես գալիս Արևմտյան Հայաստանին անկախություն տրամադրելուն, լիովին աջակցում էր Հայկական հարցի լուծման թուրքական եղանակին թվաքանակի կրճատմամբ, և վերջիվերջո Օսմանյան կայսրությունում հայ բնակչության ոչնչացմամբ»:[25] Սակայն 19-րդ դարի վերջին Օսմանյան կայսրության համար արտաքին ֆինանսավորման պայմանները բավականին լայնացան: Արտաքին ներդրումների համար պայմանների նպաստավորությունը բխում էր 2 խումբ գործոններից նախ եվրոպական երկրների կողմից Թուրքիայի տնտեսական զարգացման վերահսկողության հաստատումից և երկրորդը մեծ տերությունների կողմից Մերձավոր Արևելքում ռազմաքաղաքական և տնտեսական առավելության հասնելու մրցակցությունից: Հարկ է ընդգծել, որ Օսմանյան կայսրությունը տառապում էր արտաքին առևտրի դեֆիցիտով: Այդ դեֆիցիտը կարող էր քողարկվել օտար կապիտալի հաշվին: Իսկ թուրքական արտաքին առևտրում աճող դեֆիցիտը մեծացնում էր Թուրքիայի՝ գնալով ուժեղացող կախվածությունը օտար կապիտալից:[26]

Օսմանյան կայսրությունում եվրոպական կապիտալի կողմից առևտրական էքսպանսիային նպաստեցին հենց եվրոպական առևտրի կազմակերպչական մեթոդները: Դրանք իրենց մեջ անդրադարձնում էին եվրոպական տարբեր երկրների կապիտալիստների մրցակցությունը Մերձավոր Արևելքում տնտեսական գերակայության հասնելու համար: Այդ առնչությամբ ուշագրավ է արտասահմանյան առևտրական տների գործունեությունը, որոնց թիվը Թուրքիայում այդ շրջանում հասնում էր 6-ի: Դրանցից ամենատարեցը Ավստրո-Հունգարիայի առևտրական պալատն էր, որ հիմնադրվել էր Ստամբուլում 1870թ.:[27]

Ի դեպ 19-րդ դարի վերջում անգլիական արտադրության ապրանքները Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի և այլ զարգացող երկրների արտադրանքի կողմից հետզհետե դուրս էին մղվում մերձավորարևելյան շուկայից: Այս ընթացքում հատկապես աճեց Ավստրո-Հունգարիայի առևտուրը Տրապիզոնի հետ:[28] 19-րդ դարի վերջին Թուրքիայի սևծովյան նավահանգիստների առևտրում մրցակիցների չափաբաժինը հետևյալն էր. Անգլիայի հետ՝ 14.4%, Ֆրանսիայի հետ՝ 12.1% և Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի հետ՝ 14.3%:[29] 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Անգլիան աստիճանաբար

---

[25] Степанян С., Армения в политике империалистической Германии. Ереван, 1975, с. 100.

[26] Новичев А. Д., Очерки экономики Турции до мировой войны. М.-Л., 1937, с. 178.

[27] Внешне-экономические связи Османской Империи (XIX – XX вв). М.,1989,с. 141.

[28] Նույն տեղում, էջ 146-147:

[29] Внешне-экономические связи Османской Империи, с. 147.

կորցնում էր իր տիրապետող դիրքը ոչ միայն Թուրքիայի սևծովյան նավահանգիստներում, այլ նաև եվրոպական պրովինցիաների շուկաներում: Եթե 19-րդ դարի 80-ականներին անգլիական ապրանքների ներկրումը Օսմանյան կայսրություն այդ շրջանում դեռ 1.5–2 անգամ գերազանցում էին Ֆրանսիայի և Ավստրո-Հունգարիայի արտադրանքների իրացման ծավալը, ապա 20-րդ դարի սկզբին վիճակը փոխվեց.[30] Ամենակարևորը, ինչը կանխում էր անգլիացիների էքսպանսիան Բալկաններում, ոչ թե քիչ շահութաբերությունն էր, այլ Ավստրո-Հունգարիայի ու Իտալիայի, ապա նաև Գերմանիայի աճող մրցակցությունը:

Այսպիսով 20-րդ դարի սկզբին Ավստրո-Հունգարիայի առևտրական դիրքերի գերակայության աշխարհագրությունը Բալկաններում էականորեն մեծացավ: Այժմ Բոսնիային և Հերցեգովինային զուգահեռ այն ընդգրկում էր նաև Մակեդոնիան և Ռումելիան: Օսմանյան կայսրության եվրոպական վիլայեթներում Ավստրո-Հունգարիան տնտեսական նվաճման ճանապարհով «այնպիսի արդյունքների հասավ, որը նրան չէր տա անգամ Թուրքիայի հետ հաջողությամբ ավարտված պատերազմը»:[31] Դեռ 1908-1909թթ. Ավստրո-Հունգարիայի առևտուրը Թուրքիայի հետ գերազանցում էր Գերմանիայի և Թուրքիայի առևտրին. այն Ավստրո-Հունգարիայի հետ կազմում էր 655 միլիոն պիաստր, իսկ Գերմանիայի հետ 308 միլիոն:[32]

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի առևտրատնտեսական ներխուժումը Բալկաններ և Մերձավոր Արևելք խարխլեց նախկինում այստեղ ձևավորված կապիտալիստական երկրների տնտեսական ազդեցությունների բալանսը, ինչը պատճառ դարձավ Թուրքիայի և Եռյակ միության միջև անհիրավահավասար պայմանի ձևավորման համար: Ինչ վերաբերում է Ավստրո-Հունգարիայի դիրքերին միջազգային քաղաքականության մեջ, ապա հարկ է նշել, որ երբ Գերմանիան սկսեց վերածվել հզոր կայսրության, Ավստրիան կորցրեց իր գերիշխող դիրքը:

Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի հարաբերություններում Դանուբյան միապետության համար կարևորը Բալկանների հարցն էր: Բալկանյան ժողովուրդներն էլ՝ առաջին հերթին սլավոնները, հույսը դրել էին Ավստրիայի վրա: Ավստրիայի պայքարը Բալկաններում Թուրքիայի տիրապետության դեմ ընկալվում էր որպես պայքար իսլամի դեմ, և ամենից առաջ, որպես քրիստոնեական առաքելություն: Բայց դեռ 1894թ. ապրիլին Վիեննայում առաջադրվել

---

[30] Նույն տեղում, էջ 147:
[31] Голобородко И. И., Турция, М., 1913, с. 153.
[32] Павлович М. П., Империализм и борьба за великие железнадорожные и морские пути будущего. ч. 1, М., 1918, с. 74-75.

էր «Օսմանյան կայսրության անձեռնմխելիության սկզբունքը», որն արդյունք էր 1893թ. սեպտեմբերի 1-ին Ռուսաստանի թիկունքում Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի միջև կնքված Բելգրադի հաշտության պայմանագրի, որի հետևանքով Սերբիան և Հյուսիսարևելյան Բոսնիան վերստին թուրքական լծի տակ անցան, Ավստրիան կորցրեց բալկանյան ժողովուրդների համակրանքը:

Բալկանյան ճգնաժամի ժամանակ Գերմանիայի ռայխսկանցլեր Բյուլովն իր տեսակետը հետևյալ կերպ է ձևակերպել. «Ավստրիայի նահանջն այն քաղաքականությունից, որի ընթացքում մենք ցարդ նրան սատարել ենք, կլիներ մեր նահանջը, նրա նսեմացումը (Ավստրիայի) մեր նսեմացումը»: Իսկ սերբական հարցի կապակցությամբ նա գրել է Ավստրիայի արտաքին գործերի միհիստր Էիրենտալին, որ «ինքը դրա մասին չի կարողանա դատել, ուստի և ավստրիական որոշումը կդիտվի որպես հանգամանքների բերումով թելադրված որոշում»:[33] Այն բանից հետո, երբ Ավստրո-Հունգարիան 1908թ. անեքսիայի ենթարկեց Բոսնիա-Հերցեգովինան, Մարշալը Թուրքիայում Գերմանիայի դեսպանը, խիստ քննադատեց Ավստրիային. «Բոսնիայի և Հերցեգովինայի բռնագրավումը ծայրահեղորեն գրգռելու է թուրքերին: Ես կարող եմ Թուրքիայի նկատմամբ մեր հարաբերությունների տեսակետից բարոն Էիրենտալի գործողությունները գնահատել միայն որպես մեր դեմ ուղղված աննախադեպ արարք»: Սակայն Մարշալի այս անհանգստությունը շատ հանգիստ է ընդունում Բյուլովը և իր մեկնաբանությունը տալիս. «Ներկայիս միջազգային հարաբերությունների պայմաններում մենք պետք է այն իրողության վրա ուշադրություն դարձնենք, որ ի դեմս Ավստրո-Հունգարիայի մեզ հավատարիմ դաշնակից ապահովենք, իսկ Վիեննայի կառավարությունը հենց վերջին տարիներին քանիցս դաշնակցային իր հավատարմության ապացույց է տվել մեզ, մասամբ առանց սեփական շահերին ուշադրություն դարձնելու»:[34]

19-րդ դարի վերջին քառորդում ավստրո-հունգարական արտաքին քաղաքականությունը որոշակի քայլեր չկատարեց արևմտահայության ծանր դրությունը թեթևացնելու նպատակով: Դա բացատրվում է նրա ռազմաքաղաքական և տնտեսական կարևոր նկատառումներով, որոնք նպատակ ունեին պահպանել Օսմանյան կայսրությունը:

Գրականություն

---

[33] Ohandjanian A., Die armenische Frage und die Rolle Österreich-Ungarns und Deutchlands, S. 6.
[34] Ohandjanian A., Die armenische Frage und die Rolle Österreich-Ungarns und Deutchlands, S. 6.

1. Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, (գիրք առաջին), Երևան, Հայաստան հրատ., 1982, 360 էջ:
2. Հակոբյան Հ., Թուրքիան գերման ճանկերուն մեջ, Թիֆ. , տպ. Թառումյան, 1918, 78 էջ:
3. Ղարիբջանյան Գ., Գերմանիան, Հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը, Երևան, Տոներ հրատ., 2001, 136 էջ:
4. Չորմիսյան Լ, Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմութեան, Երևան, Մշակ, 1975, 661էջ:
5. Օհանջանյան Ա., 1915 թվական. անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին) , Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1997, 248 էջ:
6. Амфитеатров А. В., Армянский вопрос, СПб., Пушк. Скоропечатная, 1906, 58 стр.
7. Внешне-экономические связи Османской Империи (XIX – XX вв). М., Наука, 1989, 230 стр.
8. Голобородко И. И., Турция, М., Руль, 1913, 290 стр.
9. Контаисон де Людовик, Реформы в Азиатской Турции. Армянский вопрос. М., Тип. Х. Бархударяна, 1914, 44 стр.
10. Новичев А. Д., Очерки экономики Турции до мировой войны. М.-Л., Ак. Наук СССР Институт Востоковедения, 1937, 312 стр.
11. Павлович М. П., Империализм и борьба за великие железнадорожные и морские пути будущего. ч. 1, М.- Пг., Коммунист, 1918, 135 стр.
12. Степанян С., Армения в политике империалистической Германии. Ереван, Айастан, 1975, 242стр.
13. Österreich-Armenien 1872-1936. Faksimilesammlung diplomatische Aktenstucke. (Herausgegeben und eingeleited von Mag. Dr. Artem Ohandjanian), Band 1. 1872-1894, Wien. Ohandjanianverlag 1995. 728 pp.
14. Ohandjanian A., Die armenische Frage und die Rolle Österreich-Ungarns und Deutchlands, Erevan. Institut-Muzeum Der Armenishen Genozid, 2001, 54pp.

Հոդվածներ

1. Կիրակոսյան Ա., Ավստրո-Հունգարիայի քաղաքականությունը հայկական հարցում (1895-1897), Երևան,ՀԽՍՀ ԳԱԱ, ԼՀԳ, 1984, թիվ 1, էջ 28-31:
2. Հայկական հարցը Հաշտության կոնֆերանսի առաջ: «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան - ինստիտուտ, 2002, N 5, էջ 154-167:

Foreword

The article discusses the position of Austro-Hungary and Armenians at the end of the 19th century. Austro-Hungarian documents and archives give us an opportunity to prove the fact of the Armenian Genocide. It derives from those documents that Austro-Hungary also had a responsibility for the Armenian Genocide. Austro-Hungarian documents are worth in the process of international discussions and recognition of the Armenian Genocide. It is worth to point out (vis-à-vis the relations between Austro-Hungary and Armenian nation at the end of the 19th century) that the Austro-Hungarian government refused to help the Armenian nation at that period of time as well.

First of all, the economic, political and military relations between Austro-Hungary and Turkey (from the end of the Berlin Congress to 1908) are being discussed.

Because of the pro-turkish policy of Austro-Hungary (after the Berlin Congress till 1908), during the period of the Armenian Genocide the Austro-Hungarian government didn't take any real step to help devastated Armenian nation.